Հորբատեղ

Բնակչության թիվը՝ 261

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում էՀորբատեղ գյուղին։ Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Սելիմ մայրուղու հյուսիս-արևելյան մասում։ Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 23 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 12 կմ։ Համայնքը սահմանակից է Արտաբույնքի, Շատինի, Եղեգիսի, Սալլիի գյուղական համայնքներին։

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա։ Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով։ Հաճախակի են չորային և երաշտի տարիները։ Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին։

Համայնքի տարածքում գտնվող Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին 11-րդ դարի կառույց է։ Տարածքում կան նաև խաչքրեր։

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է։ Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ։ Արոտավայրերը զբաղեցնում են 1136.8 հա տարածք, վարելահողերը՝ 6.9 հա, խոտհարքերը՝ 197 հա։ Գյուղում գործում է հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց։